

բուրժուազիայի դէմ, որու հետ յաճախ կը գործակցին միեւնոյն կառավարութեան մէջ:

Այսպէս, օրինակ, Գերմանիոյ մէջ ընկեր- վարականները բուրժուական կուսակցու- թեանց հետ համերաշխարար կը վարեն իրենց երկրի բախտը, մինչդեռ կոմունիստներու դէմ կը մղեն պայքար մը, որ իր թափով ու կատա- ղութեամբ գրեթէ չի տարբերուիր միաստա- կաններու դէմ մղուած պայքարէն: Ռուսիոյ մէջ կոմունիստները, իրենց ձեռքն ունենալով իշխանութիւնը, կը սիրաբանին միաստական տարբերու — ցարական զինուորականներու եւ պաշտօնեաններու հետ, բայց ոչ մէկ միջոցի առջեւ կ'ուզեն կանգ առնել ընաճնջելու համար ընկերավարական տարբերը: Երբորդ կոմուն- նիստական Միջազգայնականի վերջին համա- գումարի մէջ, որ տեղի ունեցաւ այս տար- ուայ նոյնմբեր ամսին, գրեթէ բոլոր ճառա- խօսներու հիմնական միտքը այն էր, թէ գըլ- խաւոր թշնամին ընկերավարականներն են եւ անոնց դէմ է որ պէտք է պայքարին իրենց ամ- բողջ ոյժով կոմունիստները:

Գրեթէ բոլոր եւրոպական երկիրներու մէջ պայքարը կոմունիստներու, ընկերվա- րականներու եւ Փասչիստներու միջեւ կը կրէ բացարձակ թշնամութեան կերպարանք եւ ոչ միայն չի մեղմանար, այլ հետզհետէ աւելի անհաշտելի բնոյթ կը ստանայ:

Այսպիսով բանուորութեան դասակարգա- յին միութիւնը ոչ միայն միջազգային, այլեւ ազգային տեսակէտով շատ հեռու է իրակա- նութենէ: Կոյր դոկտրինեորութիւնը միայն կարող է ստիպել այս աղաղակող երեւոյթի պատճառը փնտռել բանուորական զանգուած- ներու ազիտութեան մէջ միայն:

X

ԱԶԳՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆԱՅՈՒՄ

ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ

Ոչ միայն ժամանակակից կոմունիստա- կան, այլեւ սոցիալիստական աշխարհահայե- ցողութեան հիմնական թերութիւնն այն է, որ ան կը բաժնէ մարդկութիւնը դասակարգա- յին գծով միայն, բացարձակապէս ժխտելով միաժամանակ կամ անտես առնելով պատմու-

թեան գլխաւոր ստեղծադործ ազգակը, իսկա- պէս օրկանական միաւորը՝ ազգութիւնը:

Եւրոպական գրեթէ բոլոր սոցիալիստական իդէոլոգներու (գաղափարաբաններու) մօտ գուք կը տեսնէք տարօրինակ, ուղղակի ար- տառոց անհասկացողութիւն մը ազգային տա- րբերքի եւ առհասարակ այն բոլոր երեւոյթնե- ռու մասին, որոնք ազգութեան էութիւնը եւ ազգային կենսունակութեան աղբիւրը կը կազմեն: Անգամ Կարլ Կառլսկիին, որ այնքան սուր հոտառութիւն, հմտութիւն, նրբամտու- թիւն եւ խորութիւն երեւան կը բերէ ըն- կերային-անտեսազիտական ամէն տեսակի հարցերու մէջ, բացարձակապէս կը բթնայ կարծես, երբ կը մօտենայ ազգային խնդիրնե- րուն:

Ճիշտ է, ազգութեան էութեան եւ առանձ- նայատկութիւններու մասին մինչեւ օրս զխտ- նականները կը վիճին, չկրնալով ամէնուն կողմէն ընդունելի ու պարզ սահմանաւորում մը տալ: Բայց ոչ ոք կը ժխտէ եւ կրնայ ժխտել աներկբայելի ու ակնհերեւ իրողութիւնը, ազ- գութեան գոյութիւնը:

Ի՞նչն է սակայն որ կը կազմէ, կը բնորո- շէ ազգութիւնը.— Լեզո՞ւն, կրօ՞նը, ցեղայի՞ն յատկութիւնները, զիտակցութի՞ւնը, հայրե- նի՞ երկիրը, պետութի՞ւնը, ընդհանուր պատ- մութի՞ւնը եւ աւանդութիւնները, բարքե՞րը, խառնուածքը, ընդհանուր մտածելակե՞րպը, զգալակերպն ու գործելակե՞րպը եւն. եւն...

Եթէ վիճելի է, որ այս յատկութիւններէն մէկը կամ միւսը, առանձին վերցուցած, բա- ւական չեն կազմելու եւ բնորոշելու համար ազգութիւնը, անվիճելի է սակայն, որ այս բոլոր յատկանիշները միասին կը գոյացնեն այն անհրաժեշտ բանը, որ ակնհերեւ կը դար- ձնէ ազգութեան գոյութիւնը, իբրեւ ընկե- րային ուրոյն եւ բարդ միաւորի մը, իբրեւ հասարակական օրկանիզմի մը:

Հասարակական այս բարդ, յաճախ ան- շօշափելի եւ շատ նուրբ յատկանշերով բնո- րոշուող երեւոյթը դժուար է վերլուծել ու սահմանաւորել: Սակայն ամէն մարդ բնազ- դով կը զգայ, թէ կայ հիմնական եւ կենսա- կան բան մը, որ կը բաժնէ անգլիացին Փրան- սացիէն, Փրանսացին գերմանացիէն, գերմա- նացին ռուսէն, հայը թուրքէն, եւայլն,